ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույնով սահմանվում է «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետև՝ ՇՊՀ) ՇՊՀ գիտական խորհրդի կարգավիճակը, ձևավորման կարգը, իրավասությունները (լիազորությունները) և աշխատակարգը:
1.2. Գիտական խորհուրդը ՇՊՀ ռեկտորի նախագահությամբ գործող՝ ՇՊՀ-ի ուսումնամեթոդական, գիտահետազոտական ու գիտատեխնիկական գործունեությունը պլանավորող, համակարգող և կարգավորող կոլեգիալ մարմին է:
1.3. Սույն կանոնակարգի մշակման համար հիմք են հանդիսացել «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:

2. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1. Գիտական խորհրդի անդամների ընդհանուր թիվը չի կարող գերազանցել քառասունհինգը, որի առնվազն հիսուն տոկոսն ընտրովի անդամներն են:

Գիտական խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են ռեկտորը (գիտական խորհրդի նախագահ), պրոռեկտորները, կենտրոնների տնօրենները, գիտական քարտուղարը (գիտական խորհրդի քարտուղար), ֆակուլտետների դեկանները, ռազմական ամբիոնի պետը, քոլեջի տնօրենը, դպրոցի տնօրենը, ՇՊՀ-ի արհեստակցական միության նախագահը, գիտությունների ամենաերիտասարդ դոկտորը, գիտությունների ամենատարեց դոկտորը, ինչպես նաև ընտրովի անդամներ ֆակուլտետների գիտական աստիճան կամ կոչում ունեցող դասախոսներից՝ սույն կանոնակարգին ու ՇՊՀ-ի ֆակուլտետի կանոնադրությանը համապատասխան: Ընտրովի անդամներից ֆակուլտետների գիտական աստիճան կամ կոչում ունեցող դասախոսները պետք է լինեն յուրաքանչյուր ամբիոնից առնվազն մեկական հոգի:

ՇՊՀ-ի գիտական խորհրդի անդամների թվի քսանհինգ տոկոսը սովորողներ են, որոնց առաջադրում են ֆակուլտետների ուսանողական խորհուրդները, իսկ ընտրությունն իրականացնում է ՇՊՀ-ի ուսանողական խոհուրդը:

2.2. Գիտական խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում խորհրդի անդամի թափուր մնացած տեղը զբաղեցվում է ի պաշտոնե կամ կառուցվածքային ստորաբաժանման կանոնադրությամբ սահմանված կարգով:

2.3. Գիտական խորհրդի ընտրովի անդամների տեղերի մասնաբաժինների համամասնությունը սահմանում է ռեկտորը, իսկ ստորաբաժանումներում անդամների ընտրությունը կատարվում է ստորաբաժանման կանոնադրությամբ սահմանված կարգով:

2.4. Գիտական խորհրդի անվանական կազմը հաստատվում է ռեկտորի հրամանով:

2.5. Գիտական խորհրդի նիստերին, ըստ անհրաժեշտության, ռեկտորի առաջարկությամբ կարող են հրավիրվել գործատուներ կամ գործատուների ներկայացուցիչներ՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

3. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է:

3.2. Գիտական խորհուրդը՝

3.2.1 հաստատում է իր կանոնակարգը,

3.2.2 ռեկտորի ներկայացմամբ՝ հոգաբարձուների խորհրդին ներկայացնում է կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, վերակազմակերպելու, լուծարելու վերաբերյալ առաջարկություն,

3.2.3 հատկացված ընդհանուր չափաքանակների շրջանակներում քննարկում և ընդունում է որոշումներ ՇՊՀ-ի մասնագիտությունների ընդունելության վերաբերյալ՝ ըստ կրթական ծրագրերի,

3.2.4 հաստատում է կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները (այդ թվում՝ Օրինակելի), ՇՊՀ ու կառուցվածքային ստորաբաժանումների հիմնական գործունեությունը և ուսումնական գործընթացը կանոնակարգող այլ ներքին իրավական ակտեր.

3.2.5 քննարկում և հաստատում է կրթական ծրագրերը, ըստ մասնագիտությունների՝ սահմանում է վճարաչափերը,

3.2.6 քննարկում է գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները, լսում գիտական հաղորդումներ ՇՊՀ-ում կատարվող կարևոր գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների արդյունքների մասին,

3.2.7 ընդունում է պատվավոր կոչումներ շնորհելու, մրցանակներ, անվանական և այլ կրթաթոշակներ տալու, ՇՊՀ-ի շքանշանով և մեդալով պարգևատրելու, հանրապետական ու միջազգային պարգևների և կոչումների

համար թեկնածություններ առաջադրելու, լսարաններ, ստորաբաժանումներ անվանակոչելու մասին որոշումներ,

3.2.8 հաստատում է ֆակուլտետների դեկանների, ամբիոնների վարիչների, դասախոսների և այլ ընտրովի պաշտոնների ընտրության կարգերը,

3.2.9 շնորհում է գիտական կոչումներ, անցկացնում է ֆակուլտետի դեկանի, ամբիոնի վարիչի, պրոֆեսորադասախոսական համակազմի թափուր տեղերի մրցութային ընտրություններ, հաստատում ֆակուլտետների դեկանների, ամբիոնների վարիչների, պրոֆեսորադասախոսական համակազմի թափուր պաշտոնների տեղակալման մրցույթների արդյունքները,

3.2.10 ՇՊՀ գործունեության բնագավառներին, նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ լիազոր մարմնին է ներկայացնում առաջարկություններ ՇՊՀ գործունեության հիմնական ուղղությունների, այդ թվում՝ նոր մասնագիտություններով կրթական ծրագրեր իրականացնելու վերաբերյալ,

3.2.11 ռեկտորին ներկայացնում է առաջարկություններ ՇՊՀ եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի նախագծի վերաբերյալ,

3.2.12 քննարկում և հրատարակության է երաշխավորում մենագրություններ, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, ժողովածուներ և այլ նյութեր,

3.2.13 ըստ անհրաժեշտության ստեղծում է գիտական խորհրդին կից գործող մշտական և ժամանակավոր հանձնաժողովներ, սահմանում դրանց կառուցվածքը, կազմերի ձևավորման կարգը և աշխատակարգը,

3.2.14 իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունից, ՇՊՀ-ի կանոնադրությունից և սույն կանոնակարգից բխող այլ լիազորություններ:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ

4. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

4.1. Գիտական խորհրդի նիստերը գումարվում են ուսումնական տարվա ընթացքում՝ առնվազն ութ անգամ:

4.2. Գիտական խորհրդի նիստերը նախապատրաստում են ռեկտորը (գիտական խորհրդի նախագահ) և գիտական քարտուղարը (գիտական խորհրդի քարտուղար):

4.3. Գիտական խորհրդի քարտուղարը գիտական խորհրդի հերթական կամ արտահերթ նիստ հրավիրում և օրակարգի մասին գրավոր ծանուցում է գիտական խորհրդի անդամներին հերթական նիստի անցկացման օրվանից առնվազն հինգ օր առաջ, իսկ արտահերթ նիստի անցկացման օրվանից՝ առնվազն մեկ օր առաջ: Գիտական խորհրդի տվյալ նիստում քննարկվող հարցերի վերաբերյալ փաստաթղթային փաթեթը (որոշումների նախագծեր, տեղեկանք-հիմնավորումներ և

այլն) գիտական խորհրդի անդամներին ուղարկում է հերթական նիստի անցկացման օրից առնվազն երեք օր առաջ, իսկ արտահերթ նիստի անցկացման օրվանից՝ առնվազն մեկ օր առաջ:

4.4. Գիտական խորհրդի արտահերթ նիստերը կարող են հրավիրվել գիտական խորհրդի նախագահի առաջարկով, ինչպես նաև գիտական խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդի պահանջով: Գիտական խորհրդի նախագահն արտահերթ նիստ հրավիրելու վերաբերյալ պահանջն ստանալուց հետո տասնօրյա ժամկետում պարտավոր է ապահովել նիստի գումարումը:

4.5. Գիտական խորհրդի նիստը համարվում է իրավազոր՝ նրա անդամների առնվազն երկու երրորդի ներկայության դեպքում:

4.6. Գիտական խորհրդի անդամների ներկայությունը նիստն սկսելուց առաջ գրանցում է գիտական քարտուղարը: Քվորում չապահովելու դեպքում գիտական խորհրդի նախագահի որոշմամբ գրանցման գործընթացը կարող է երկարաձգվել մինչև երեսուն րոպե, իսկ դրանից հետո քվորում չապահովելու պարագայում նիստը հետաձգվում է:

4.7. Քվորումի բացակայության պատճառով հետաձգված գիտական խորհրդի նիստը գումարվում է ըստ սույն կանոնակարգով սահմանված կանոնների՝ նույն օրակարգով:

4.8. Ռեկտորը, բացելով գիտական խորհրդի նիստը, տեղեկատվություն է տրամադրում քվորումի առկայության վերաբերյալ և քվեարկության է դնում նիստի օրակարգը:

4.9. Գիտական խորհրդի անդամները կարող են առաջարկել, փոփոխել նիստի օրակարգում ընդգրկված հարցերը: Առաջարկը սահմանված կարգով դրվում է քվեարկության:

4.10. Նիստի օրակարգում ներառված հարցերի քննարկման կարգը, հիմնական և հարակից զեկույցների, ինչպես նաև ելույթների տևողությունը որոշում է գիտական խորհուրդը՝ խորհրդի նախագահի առաջարկությամբ:

4.11. Գիտական խորհրդի նիստերը կարող են անցկացվել տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման միջոցով:

5. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Գիտական խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, եթե որոշում չի ընդունվում փակ, գաղտնի քվեարկության մասին:

5.2. Պաշտոնների զբաղեցման, գիտամանկավարժական պաշտոնների տեղակալման և գիտական կոչումների շնորհման, ֆակուլտետի դեկանի, ամբիոնի վարիչի (բացառությամբ ռազմական ամբիոնի պետի) ընտրության և այլ մրցույթները

կատարվում են փակ գաղտնի քվեարկությամբ (ըստ համապատասխան կանոնակարգերի, իսկ վերջիններիս բացակայության դեպքում՝ ՇՊՀ գիտական խորհրդի նիստում հաստատված մրցութային կանոններով):

5.3. Փակ գաղտնի քվեարկության համար նախատեսված քվեաթերթիկները պատրաստում է գիտական քարտուղարը՝ ինքնաբացարկ չհայտնած թեկնածուների անուն-ազգանունները գիտական խորհրդի որոշմամբ գրանցելով քվեաթերթիկում՝ մինչև գիտական խորհրդի նիստում քվեարկության սկսվելը:

5.4. Քվեաթերթիկներում նշվում է գիտական խորհրդի նիստի անցկացման ամսաթիվը, հերթական համարը, քվեարկության դրվող հարցի բովանդակությունը, քվեարկության հնարավոր տարբերակները («կողմ», «դեմ» և այլն):

5.5. Քվեաթերթիկի հակառակ երեսին ստորագրում է գիտական քարտուղարը, իսկ անհրաժեշտության դեպքում գիտական խորհրդի որոշմամբ նաև՝ հաշվիչ հանձնաժողովի նախագահը և անդամները:

5.6. Քվեարկությունից առաջ հաշվիչ հանձնաժողովի նախագահը, ըստ անհրաժեշտության, գիտական խորհրդին տեղեկություն է տրամադրում քվեարկության անցկացման և քվեաթերթիկի լրացման կարգի վերաբերյալ:

5.7. Հաշվիչ հանձնաժողովի անդամները քվեարկության վայրում բացում են քվեատուփը և իրականացնում քվեարկության արդյունքների հաշվարկը:

5.8. Քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրվում է հաշվիչ հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:

5.9. Քվեարկության արդյունքները հաստատվում են գիտական խորհրդի որոշմամբ:

6. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

6.1. Գիտական խորհրդի որոշումները իրականացվում են ռեկտորի հրամաններով:

6.2. Ռեկտորն իրավասու է կասեցնելու գիտական խորհրդի, ՇՊՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումների, կառավարման մարմինների այն որոշումները, որոնք չեն բխում նրանց իրավասությունից, հակասում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանն ու ՇՊՀ-ի կանոնադրությանը, և նշանակում է դրանց վերաքննարկում:

7. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Գիտական խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստերի արձանագրությունը (երկու օրինակ) կազմում է գիտական քարտուղարը գիտական խորհրդի նիստի ավարտից հետո՝ տասն օրվա ընթացքում: Արձանագրությունը ստորագրում են տվյալ նիստին մասնակցող գիտական խորհրդի բոլոր անդամները:

7.2. Արձանագրության մեջ պետք է նշվեն նիստի անցկացման ամսաթիվը, նախագահը, քարտուղարը, քվեակազմը, նիստի օրակարգը, ելույթների հիմնական

դրույթները, քվեարկության դրված հարցերի բովանդակությունը, քվեարկության արդյունքները և գիտական խորհրդի կողմից ընդունված որոշումները:

8. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

8.1. Հաշվիչ հանձնաժողովը ձևավորվում է գիտական խորհրդի որոշմամբ՝ նրա անդամներից: Նիստում հաշվիչ հանձնաժողովի կազմն ընտրվում է բաց քվեարկությամբ՝ գիտական խորհուրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Տվյալ հանձնաժողովի նախագահը ընտրվում է տվյալ հաշվիչ հանձնաժողովի անդամների կողմից:
8.2. Հաշվիչ հանձնաժողովը կազմակերպում և անցկացնում է քվեարկությունը, պարզաբանում քվեարկության ընթացքում առաջացող հարցերը, քվեարկության կարգը, ապահովում քվեարկության կարգի պահպանումը, կազմում է արձանագրություն քվեարկության արդյունքների վերաբերյալ և այն ներկայացնում գիտական խորհրդի հաստատմանը:

9. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

9.1. Ըստ անհրաժեշտության՝գիտական խորհրդի որոշմամբ կարող են ստեղծվել մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ (մրցութային, կանոնակարգերի մշակման և այլն), որոնց կարգավիճակը, կառուցվածքը, կազմը, իրավասությունը և աշխատակարգը սահմանվում են գիտական խորհրդի որոշմամբ:
9.2. Յուրաքանչյուր հանձնաժողով ուսումնասիրում է իրեն վերապահված խնդիրները և դրանց վերաբերյալ գիտական խորհրդին է ներկայացնում համապատասխան առաջարկություններ և եզրակացություններ:
9.3. Հանձնաժողովներն իրավասու են սահմանված կարգով ՇՊՀ կառավարման մարմիններից, կառուցվածքային ստորաբաժանումներից և պաշտոնատար անձանցից պահանջելու և ստանալու անհրաժեշտ փաստաթղթեր ու նյութեր:
9.4. Հանձնաժողովների նիստերն իրավազոր են հանձնաժողովի անդամների առնվազն երկու երրորդի ներկայության դեպքում:
9.5. Հանձնաժողովներում քննարկվող փաստաթղթերը և եզրակացությունները հաստատվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:
9.6. Հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն հանձնաժողովում քննարկված հարցերի վերաբերյալ ունենալ հատուկ կարծիք և այն ներկայացնել գիտական խորհրդի քննարկմանը:

10. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10.1 Սույն կանոնակարգը, վերջինիս մեջ փոփոխություններն ու լրացումները հաստատվում են Գիտական խորհրդի որոշմամբ: